փուէն, և նստեալ էին Թադէոս[1]) վարդապետն՝ Սուրբ կարապետի առաջնորդն, Մարտիրոս վարդապետն Երուսաղէմացի, Յաչատուր եպիսկոպոսն Սըսոյ՝ առաջնորդ վանից, Դազար վարդապետն Ըստամպօլու եւ մխաբանք եղիազար վարդապետին եւ երուսաղէմայ ևս (Ղեր.):

Ճշի (8 Մայ.) առաւօտուս գնացի ի մեր ժամն և անտի ի Մղտեսոնցն եւ զհացն անդ կերեալ՝ ելեալ գնացի ի խանութ:

Եւ կէս աւուրս փոխեցին զղայմախամ Իւսուֆ փաշան և եդին ի տեղի նորա զՀայտարզատէն. եւ էր սա խիստ ծեր և ցաւոտ, և ամին Իւսուֆ փաշին զԱիլխատրա:

Եւ օրս արուն առի ի թեւէս: Եաղուպենք ի տուն գնացին օրս: Օրս Մարկոսն եկաւ ի Պուրսայու և Սարգիս թէրճիմանն ևս:

Ուրբաթ (9 Մայ.) առաւօտուս ի ժամ գնացի եւ անտի ի խանութ: Եւ օրս թաղաւորն ի դուրս ելաւ բազում փառօք և ամենայն ծառայքն ընդ առաջ նորա՝ փաշայ և աղայ և որ ի մէջ մանսուպի էին, չաուշէք և մուֆթաքար աղայ, սօլախ և փէյկիկ, ամենեքեան իւրաքանչիւր իւր զգեստովն[2]) դաս դաս երթային ընդ առաջ եւ գնացեալ ի նամազ ի ճամին (պրպռ), և եկն նոյն ամբոխիւն գնաց ի պալատն իւր, և ի պալատէն իւրմէ մինչև ի ճամին յայն՝ խանութպանքն և տանուտէրք ի ճանապարհին աւազ լցին, որ ձիոյ ոտքն ոչ եհաս ի յայլ տեղ՝ այլ ի վերայ աւազին:

Երեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի եւ անտի ի տուն:

Շաբաթ օրս (10 Մայ.) գնացի ի մեր ժամն եւ

1) Թաթէոս. 2) սգեստովն.